ՀՀ Տավուշի մարզի Ն.Ծաղկավանի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-ֆինանսիստի /ծածկագիր 3.1-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

16.06.2015

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավանի /Իջևանի շրջ/ գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀՀ Տավուշի մարզի Ն.Ծաղկավանի գյուղապետարանը հայտարաում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոն զբաղեցնելու համար:
Տավուշի մարզի Ն.Ծաղկավանի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-ֆինանսիստ /ծածկագիրը 3.1-1/:
Առաջատար մասնագետ-ֆինանսիստը
ա)կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ժամանակին և պատշաճ որակով:
բ)կատարում է հարկերի և տուրքերի պարտադիր վճարների,վարչական գանձումների,տույժերի,
տուգանքների,վարձավճարների հավաքագրումը և հաշվառումը,
գ)ստանում,մուտքագրում և վճարում է աշխատավարձերը,գորխուղումները և դրամական այլ նպաստները,
դ)վարում է դրամարկղային գիրքը,
ե)քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,
զ)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ
Ունի օրենքով,իրավական այլ ակտով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականուրյուններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է
ա)ունի առնվազը միջնակարգ կրթություն
բ)ունի << Համայնքային ծառայության մասին>>,<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքների,աշխատակազմի կանոնադրության և լիազորությանների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
Մրցույթին մասնակցելու համար դիմողը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա)գրավոր դիմում(հանձնաժողովի անունով)
բ)Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝դիպլոմի,վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից)պատճենները՝բնօրինակների հետ միասին:
գ)<<Համայնքային ծառայության մասին>>ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ,,ե,, կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զին գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման պատճենները կամ համապատասխան տեղեկանք
դ)մեկ լուսանկար (3 x 4)
ե) անձնագրի պատճենը
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:Փաստաթղթերը ընդունվում են Ն.Ծաղկավանի գյուղապետարանում ամեն օր ժամը 10-ից 18-ը՝բացի շաբաթ և կիրակի օրերից:
Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու,ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ն.Ծաղկավանի գյուղապետարանի աշխատակազմ (հասցեն՝գյուղ Ն.Ծաղկավան 1փ 5փկղ 8շենք)
Մրցույթը կկայանա 2015թ.հուլիսի 16-ին ժամը12-ին Ն.Ծաղկավանի գյուղապետարանում
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015թ. հուլիսի 11-ը
Հասցեն՝ՀՀ Տավուշի մարզ գ.Ն.Ծաղկավան
Հեռ.093 55 54 95 էլ.փոստ՝ nerqintsaghkavan.tavush@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Ծաղկավան /Իջևանի շրջ/

Հեռ..՝ +374 93 55 54 95

Էլ. փոստ՝ nerqintsaghkavan.tavush@mta.gov.am

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ